



ԸՀՄ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
2015թ. թիվ 24

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԸՀՄ տեղեկագրի սույն համարում մեր ընթերցողին ենք ներկայացնում Հայաստանի արհմիությունների համար անչափ կարևոր Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը՝ ստորագրված Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ.Մրրահամյանի, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Է.Թումասյանի և Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գ.Մակարյանի կողմից

2015 թվականի օգոստոսի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն, ստորագրել են Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր, որով սահմանվում են սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման լրացուցիչ երաշխիքներ և պայմանագրի կողմերի համատեղ գործողությունները դրանց իրականացման համար:

Կոլեկտիվ պայմանագիրը նպաստելու է հանրապետությունում սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կայուն զարգացմանը՝ ուղղված երկրում զբաղվածության արդյունավետ ապահովմանը, արժանապատիվ աշխատանքի խրախուսմանը, սոցիալական գործընկերության և համերաշխության կայացմանն ու զարգացմանը:

Պայմանագիրը միտված է նաև աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտներում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում սոցիալական գործընկերների հնարավորինս լայն մասնակցության ապահովմանը, ինչպես նաև գործատուների և արհմիությունների ինստիտուցիոնալ և գործառնական կարողությունների զարգացմանը:

Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը գործելու է երեք տարի ժամկետով:

Պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով, պայմանագրով սահմանված կարգով, ձևավորվել է եռակողմ հանձնաժողով՝ կողմերի ներկայացուցիչների հավասար թվաքանակով: Հանրապետական եռակողմ հանձնաժողովում, ի թիվս այլոց, Հայաստանի արհմիությունները ներկայացնում է Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա.Ասատրյանը:

Պայմանագրի բովանդակությունը՝ տեղեկագրի հաջորդ էջերում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (այսուհետ՝ Կողմեր), համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, կնքում են Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով սահմանվում են սոցիալ-աշխատանքային և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորման լրացուցիչ երաշխիքներ և Կողմերի համատեղ գործողությունները դրանց իրականացման համար: Կողմերը սոցիալական գործընկերության շրջանակներում ապահովում են Հայաստանի Հանրապետության սոցիալ-աշխատանքային և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների կայուն զարգացումը, որը պետք է ուղեկցվի զբաղվածության մակարդակի բարձրացմամբ և սոցիալական համերաշխության ամրապնդմամբ:

Կողմերը համաձայնվում են, որ սոցիալական գործընկերությունը շահերի հավասարակշռման, սոցիալական համերաշխության ապահովման և խնդիրների լուծման արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոցն է:

Կողմերը համաձայնվում են սոցիալական գործընկերության հիմնական նպատակների և առաջնահերթ խնդիրների, ինչպես նաև դրանց լուծման հիմնական ուղղությունների շուրջ, որոնք ամրագրվում են սույն Պայմանագրում:

Կողմերը համաձայնվում են՝ սոցիալ-աշխատանքային լրացուցիչ երաշխիքների իրացման կառուցակարգերը սահմանելիս հաշվի առնել Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների և Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի պահանջները:

Կողմերը պայմանավորվում են, որ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող, գործատուների և աշխատողների՝ աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության առումով էական նշանակություն ունեցող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, բացառությամբ օպերատիվ կարգով որոշումների ընդունում պահանջող նախագծերի, ներկայացվում են Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կարծիքին՝ մինչև համապատասխան մարմնի կողմից դրանց ընդունումը:

Կողմերը կօժանդակեն աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական միջոցառումների և ծրագրերի մշակմանը և իրականացմանը:

Կողմերը, սոցիալական գործընկերության համակողմանի զարգացման նպատակով կաջակցեն գործատուների ճյուղային և տարածքային միավորումների և կազմակերպություններում արհմիությունների կայացմանը:

1. Աշխատողների անվտանգություն և առողջության պահպանում

Աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նպատակով կողմերը պարտավորվում են.

1.1. աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման գործընթացներում արհմիության դերի, ինչպես նաև գործատուների տնտեսական շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացման նպատակով մշակել առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ,

1.2. աջակցել աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման կանոնների ու նորմերի մշակմանը և ապահովել դրանց ներդրումը, նպաստել կազմակերպություններում աշխատանքի պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակմանը,

1.3. աջակցել աշխատանքային պայմանների մոնիտորինգի ժամանակակից համակարգերի ներդրմանը և ապահովել դրանց արդյունավետ շահագործումը,

1.4. յուրաքանչյուր տարի քննարկել աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման կանոնների ու նորմերի կիրառման և վերահսկման ընթացքը և ներկայացնել համապատասխան առաջարկներ,

1.5. աջակցել հիմնարկներին և կազմակերպություններին՝ ստեղծելու աշխատողների առողջության և անվտանգության պահպանման հարցերով զբաղվող ստորաբաժանումներ և հանձնաժողովներ,

1.6. ներկայացնել առաջարկություններ՝ աշխատանքի վայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի քննության և հաշվառման միասնական կարգի սահմանման շուրջ:

2. Աշխատանք, աշխատավարձ և աշխատողների կենսամակարդակ

Արժանապատիվ աշխատանքի ապահովման նպատակով կողմերը պարտավորվում են.

2.1. աջակցել աշխատողների որակավորման բարձրացմանը՝ աշխատաշուկայի պահանջներին և տնտեսության կայուն զարգացմանը համապատասխան,

2.2. հավասար մրցակցության և աշխատողների շահերի արդյունավետ պաշտպանության նպատակով՝ աջակցել անօրինական աշխատանքի կրճատմանը,

2.3. աջակցել կոլեկտիվ պայմանագրերի կնքման պրակտիկայի ներդրմանը,

2.4. աջակցել անհատական աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի ներդրմանը,

2.5. նպաստել միջազգային սկզբունքներին համապատասխան նվազագույն աշխատավարձի սահմանմանը,

2.6. ձեռնարկել միջոցներ արժանապատիվ աշխատանքի՝ միջազգայնորեն ընդունված չափանիշների ապահովման համար,

2.7. ձևավորել փոխհամաձայնեցված մոտեցումներ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատավարձի ինդեքսավորման մեխանիզմների վերաբերյալ,

2.8. աջակցել աշխատանքի վարձատրության ժամանակակից բազմագործոն համակարգերի մշակմանը և ապահովել դրանց ներդրումը,

2.9. աջակցել աշխատանքի և աշխատավարձի ոլորտում կանանց և տղամարդկանց հավասարության ապահովմանը,

2.10. քննարկել գործատուի անվճարունակության դեպքում աշխատանքի վարձատրության իրավունքի պաշտպանության մեխանիզմների մշակումը և ներդրումը՝ ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում,

2.11. ձևավորել փոխհամաձայնեցված մոտեցումներ՝ ՀՀ տարածքում կենսապահովման նվազագույն բյուջեի կազմը և կառուցվածքը սահմանելու վերաբերյալ:

3. Աշխատաշուկա և զբաղվածություն

Բնակչության զբաղվածության խթանման, աշխատանքային ռեսուրսների զարգացման նպատակով՝ Կողմերը պարտավորվում են աջակցել.

3.1. աշխատաշուկայի զարգացման վիճակի ու դինամիկայի վերաբերյալ ամբողջական, ճշգրիտ տեղեկատվական համակարգի ներդրման և հետագա զարգացման ապահովմանը,

3.2. որակավորումների ազգային շրջանակի արդիականացմանը և կիրառմանը,

3.3. տնտեսության զարգացման պահանջներին համապատասխանող աշխատուժի առաջարկի ձևավորմանը,

3.4. երիտասարդների, կանանց, գյուղական շրջաններում բնակչության և հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության խթանմանը,

3.5. մասնագիտական կողմնորոշման արդյունավետ համակարգի ներդրմանը և զարգացմանը,

3.6. նախնական և շարունակական մասնագիտական կրթության ոլորտում գործատուների և արհմիությունների ներգրավվածության ընդլայնմանը և աշխատավայրում մասնագիտական ուսուցման (աշկերտության) և աշխատանքային պրակտիկայի կազմակերպմանը,

3.7. զբաղվածության տարեկան ծրագրերի մշակմանը և իրականացմանը, իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրմանը,

3.8. աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների արդյունավետ և թափանցիկ համագործակցության ապահովմանը,

3.9. միգրանտ աշխատողների շահերի պաշտպանությանը:

4. Սոցիալական ապահովագրություն, սոցիալական պաշտպանություն

Վարձու աշխատողների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով Կողմերը ստանձնում են հետևյալ պարտավորությունները.

4.1. հաշվի առնելով Կողմերի շահերը՝ միջոցներ ձեռնարկել պարտադիր և կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգի ներդրման և զարգացման ուղղությամբ,

4.2. միջոցներ ձեռնարկել արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության արդյունավետ համակարգ ներդնելու ուղղությամբ:

5. Սոցիալ-տնտեսական ոլորտ

Կողմերը պայմանավորվում են փոխադարձ համաձայնության հիման վրա համատեղ մշակել և իրականացնել սոցիալ-աշխատանքային ոլորտի հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող միջոցառումներ, որոնք միտված կլինեն արդյունավետ և կայուն զբաղվածության խթանմանը, գործազրկության մակարդակի կրճատմանը, սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը հետևյալ ուղղություններով.

5.1. աջակցել տնտեսական աճի կայունությանը և տնտեսության մրցունակության բարձրացմանը, այդ թվում՝ խթանել ընտանեկան և սկսնակ բիզնեսը՝ որպես աղքատության հաղթահարման և զբաղվածության ապահովման կարևորագույն միջոց,

5.2. աջակցել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, ինչպես նաև այս ճանապարհով ինքնազբաղվածության խթանմանը,

5.3. աջակցել տնտեսության գիտելիքահեն և աշխատատար ճյուղերում կոնկրետ ներդրումային նախագծերի խթանմանն ու իրականացմանը,

5.4. աջակցել ինովացիոն գործունեության զարգացմանը, այդ թվում՝ ինովացիոն կոնկրետ ծրագրերի իրականացմանը, ներառյալ ռեսուրսախնայողական և էներգախնայողական ծրագրերը:

6. Հանձնաժողովի ձևավորման կարգը

6.1. Հանրապետական մակարդակում կոլեկտիվ բանակցությունների վարման, պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման, Պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով գործողությունների ծրագրի մշակման, Պայմանագրի կատարման ընթացքում ծագած խնդիրների քննարկման և Կողմերին համապատասխան առաջարկների ներկայացման նպատակով, Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում Կողմերը ձևավորում են հանձնաժողով:

6.2. Հանձնաժողովի նախագահը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է:

6.3. Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության ձևավորում է աշխատանքային խումբ (խմբեր):

6.4. Հանձնաժողովը կազմվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչներից:

6.5. Կողմերից յուրաքանչյուրը Հանձնաժողովում պետք է ունենա հավասար թվաքանակով՝ 5-ական անդամ:

6.6. Հանձնաժողովում ՀՀ կառավարության ներկայացուցիչների նշանակումը և փոփոխությունը կատարում է ՀՀ կառավարությունը, իսկ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչներին՝ համապատասխանաբար նշված կազմակերպությունները:

6.7. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է ունենա մշտական փոխարինող:

6.8. Հանձնաժողովի անդամին փոխարինող անձը փոխարինման դեպքում ունի նույն լիազորությունները, որոնք ունի Հանձնաժողովի անդամը:

6.9. Հանձնաժողովի կազմի հաստատման հետ միաժամանակ հաստատվում է նաև Հանձնաժողովի անդամներին փոխարինողների ցանկը:

6.10. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

6.11. Հանձնաժողովը գործում է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում:

6.12. Հանձնաժողովը ձևավորման պահից 10-օրյա ժամկետում մշակում և հաստատում է Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգը:

7. Հանձնաժողովի նախագահի լիազորությունները

Հանձնաժողովի նախագահը.

7.1. Կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները,

7.2. Ոչ պակաս քան երեք ամիսը մեկ անգամ հրավիրում և վարում է հանձնաժողովի հերթական, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, արտահերթ նիստերը,

7.3. Հաստատում է Հանձնաժողովի աշխատանքային պլանները և ստորագրում հանձնաժողովի որոշումները,

7.4. Իր լիազորությունների սահմաններում, Հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, Կողմերի ղեկավարների հետ անցկացնում է խորհրդակցություններ՝ օպերատիվ կարգով որոշումների ընդունում պահանջող հարցերի վերաբերյալ,

7.4. Իր լիազորությունների սահմաններում, Հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, Կողմերի ղեկավարների հետ անցկացնում է խորհրդակցություններ՝ օպերատիվ կարգով որոշումների ընդունում պահանջող հարցերի վերաբերյալ,

7.5. Ապահովում է Հանձնաժողովի գործողությունների և որոշումների հրապարակայնությունը

7.6. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է Կողմերի ղեկավարներից մեկը՝ Կողմերի համաձայնությամբ,

7.7. Հայաստանի Հանրապետության կառավարությունում իրավական ակտերի նախագծերի ներկայացման ժամանակ Հանձնաժողովի նախագահի կողմից հնչեցվում է նաև Հանձնաժողովի կարծիքը,

7.8. Հանձնաժողովի որոշումներն ուղարկում է ՀՀ վարչապետին:

8. Պայմանագրի կիրարկման ապահովումը, կատարման նկատմամբ հսկողությունը և տեղեկատվության տրամադրումը

8.1. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, Կողմերը հաստատում են Հանձնաժողովի կողմից մշակված և Պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով Կողմերին ներկայացված գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կամ անհամաձայնության դեպքում, լրամշակման նպատակով համապատասխան առարկություններով, առաջարկություններով այն վերադարձնում են Հանձնաժողովի քննարկմանը:

8.2. Ծրագիրը Հանձնաժողովին վերադարձնելուց հետո քսանօրյա ժամկետում համապատասխան ուղղումներով, կրկին ներկայացվում է Կողմերի հաստատմանը:

8.3. Կողմերը պայմանավորվում են Պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը փոխանցել Հանձնաժողով:

8.4. Պայմանագրի իրականացման ընթացքը լուսաբանելու նպատակով, Հանձնաժողովը զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հրապարակում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական գործընկերության զարգացման և սոցիալ-աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն:

8.5. Պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հանձնաժողովը:

9. Պայմանագրի փոփոխման և գործողության ժամկետները

9.1. Պայմանագրի փոփոխությունը նախաձեռնող Կողմը Հանձնաժողով է ներկայացնում փոփոխությունների վերաբերյալ գրավոր առաջարկ: Համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովում սկսվում են բանակցությունները, որոնք պետք է ավարտվեն ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: Պայմանագրի փոփոխությունների համաձայնեցված նախագիծը Հանձնաժողովը՝ բանակցություններն ավարտվելուց հետո, ներկայացնում է Կողմերի հաստատմանը:

9.2. Պայմանագրի տեքստը տպագրվում է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և տեղադրվում է Կողմերի պաշտոնական կայք-էջերում՝ այն ստորագրելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

9.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է երեք տարի ժամկետով:

9.4. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի ստորագրությունները

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ

Է. ԹՈՒՄԱՍՅԱՆ

Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ

Գ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՏԱՀՈԳՎԱԾ ԵՆ ՈՒՎՐԱԻՆԱՅՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ

Ընթացիկ տարվա օգոստոսի 26-ին և 27-ին Ուկրաինայի մայրաքաղաքում Եվրոպայի հասարակական սպասարկման միավորման կողմից կազմակերպված երկօրյա հանդիպումը համախմբել էր Հայաստանի, Վրաստանի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Բելառուսի, Ուկրաինայի հասարակական սպասարկման ոլորտի արհմիությունների ներկայացուցիչներին: «Հասարակական սպասարկման դերի բարձրացումը ճգնաժամի պայմաններում. հակասություններն ու դրանց լուծման ուղիները» թեմայով գիտաժողովում Հայաստանը ներկայացնում էին Հայաստանի պետիմնարկների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը, կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի, առողջապահության աշխատողների արհմիությունների ներկայացուցիչները:

Արհմիության ներկայացուցիչներին Ուկրաինայում համախմբելու նպատակը երկրում շարունակվող պատերազմի պայմաններում արհմիություններին համերաշխություն ցուցաբերելն էր:

Հանդիպմանն առանցքային էին Ուկրաինայում տիրող իրավիճակի հետևանքով առաջացած սցիալ-տնտեսական խնդիրները, որոնց առնչվում են աշխատողները, մարդիկ: Հյուրընկալող երկրի արհմիությունների ներկայացուցիչների տվյալներով՝ շատերը հայտնվել են աղքատության շեմի սահմանին, անգամ դրանից ցածր: Վատթարացել է տնտեսական իրավիճակը: Օր օրի նվազում է առողջապահության, կրթության և հանրային այլ ծառայությունների ֆինանսավորումը պետության կողմից: Մեծ ճնշում է գործադրվում համայնքային ու հանրային ծառայությունների մասնավորեցման նպատակով: Բարգավաճում է կոռուպցիան, ինչը ազդում է նաև դատական համակարգի վրա: Աճում է անհավասարությունը:

Ուկրաինայի արհմիությունների ներկայացուցիչներն իրենց բացասական դիրքորոշումն արտահայտեցին արհմիությունների գրանցման վերաբերյալ օրենքի նախագծի շուրջ: Եվրոպայի հասարակական սպասարկման միավորման (EPSU) նիստում արհմիությունների ներկայացուցիչները քննարկել են նշված օրենսդրական նախագծի հետևանքները աշխատողների ու արհմիությունների վրա: Այն զգալիորեն կդժվարացնի աշխատողների միավորումը արհմիություններում, միննույն ժամանակ համապատասխանում է արհմիության թուլացմանն ուղղված օրենսդիր ու գործադիր իշխանությունների ներկայացուցիչների հայտարարություններին: Ընդ որում, օրենսդրական նախագիծը ներկայացվել է պատգամավորական խմբերի կողմից առանց արհմիությունների հետ քննարկումներ անցկացնելու:

Եվրոպական արհմիությունների ներկայացուցիչները եկել են այն եզրահանգման, որ նախագիծը պետք է ետ կանչվի ուկրաինական պառլամենտից:

Աշխարհի խոշորագույն արհմիութենական կառույցի՝ ԵՀՄՄ-ի անդամ կազմակերպությունները հանդիպման ընթացքում կիսել են ուկրաինական արհմիությունների մտահոգությունները՝ ընդգծելով, որ քննադատումը չպետք է դիտարկվի որպես «հակահայրենասիրական»: Այդպես վարվում են ուկրաինական զանգվածային լրատվության որոշ միջոցներ, երբ բարձրացվում են խստագույն խնայողության ռեժիմի (austerity) և կոռուպցիայի հարցերը: Նշվածի կապակցությամբ Վրաստանի ներկայացուցիչը հայտարարել է. «Մենք այստեղ նրա համար չենք, որպեսզի դուր գանք կառավարությանը կամ մեկ այլ կառույցի: Արհմիությունները պաշտպանում են իրենց անդամների ու աշխատողների շահերը ինչպես կառավարության, այնպես էլ գործատուների կողմից ոտնձգություններից: Որպես հանրային ծառայությունների ոլորտի արհմիություններ՝ մենք պայքարում են հանրային շահերի ու որակի համար»:

Ուշադրության կենտրոնում էին նաև աշխատողների կազմակերպման և նոր անդամների ներգրավման խնդիրները: Եվրոպայի հասարակական սպասարկման միավորման գլխավոր քարտուղար Յան Վիլիեմ Գուդրիանը ընդգծել է աշխատողների կազմակերպության և նոր անդամներ ներգրավելու քաղաքականության կարևորությունը՝ կապված շատ երկրներում արհմիութենական անդամակցության նվազման հետ: Ըստ նրա՝ անհրաժեշտ է ամրապնդել գործընկերության և միասնական միջոցառումներ կազմակերպելու կարողությունը: Հոլանդական գործընկեր Էդդի Սթամը ներկայացրել է իր փորձը և պատրաստակամությունը հայտնել անդամ կազմակերպությունների հետ դիտարկել անդամներ ներգրավելու նոր մեթոդներ: Նշենք, որ Յան Վիլիեմ Գուդրիանը և Հասարակական սպասարկման ինտերնացիոնալի խորհրդի անդամ, հանդիպման ղեկավար Ալեքսեյ Ռոմանյուկը նախօրեին հանդիպել են Ուկրաինայի արհմիության շենքի վերակառուցման հիմնադրամի տնօրենի հետ: Քննարկվել են Հասարակական

սպասարկման միավորման կողմից հավաքագրված ֆինանսական պահուստների օգտագործումը և համերաշխության միջոցառումների կազմակերպումը, որոնք կնպաստեն գրասենյակների և կահույքային վերազինմանը: Հիշեցնենք, որ արհմիությունների շենքն այրվել էր 2014թ. փետրվարի 19-ին, երբ հատուկ նշանակության ջոկատները հարձակվել էին Անկախության Մայրամուտ գտնվող շենքի ցուցարարների վրա: Հեղափոխության ընթացքում մոտ 30,000 մարդ սնվում էր արհմիութենական ճաշարանում. այժմ ոչ ճաշարանը, ոչ էլ մնացած գրասենյակները չեն գործում: Շենքը ունի ամբողջական վերանորոգման կարիք և ներդրումներ է պահանջում:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների հանրապետական արհմիության նախագահ Ա.Ասատրյանը իր հերթին մասնակիցներին ներկայացրել է մեր հանրապետությունում առկա խնդիրները, քննարկվել են դրանց լուծման տարբերակներ:

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Եվրոպայի հասարակական սպասարկման միավորման՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ համատեղ կազմակերպած հերթական՝ երրորդ տարածքային հանդիպումն անցկացվել է Էստոնիայի մայրաքաղաք Տալինում, ընթացիկ տարվա հուլիսի 7-9-ը:

Միավորման անդամ կազմակերպությունների քսաներկու ներկայացուցիչները՝ Էստոնիայից, Լատվիայից, Լիտվայից, Հայաստանից, Վրաստանից և Տաջիկստանից, քննարկել են արժանապատիվ աշխատանքը հասարակական սպասարկման աշխատողների համար: Հաշվի առնելով վերջին տասը տարիներին արհմիության շարքերի նոսրացման միտումը, աշխարհի խոշորագույն արհմիութենական կառույցի ներկայացուցիչ Ռիչարդ Պոնդը ներկայացրել է անդամ կազմակերպությունների փորձը՝ ուղղված անդամների ներգրավմանը և աշխատողների կազմակերպմանը:

Աշխատանքի միջազգային կազմակերպության նեկայացուցիչ Էվելին Թոդը ներկայացրել է Եվրոպայի արդյունաբերության խնդիրները, որտեղ արհմիութենական անդամակցության մակարդակը ևս իջնում է:

Հայաստանի պետհիմնարկների արհմիության նախագահ Ա.Ասատրյանը ներկայացրել է արժանապատիվ աշխատանքը մեր հանրապետությունում, քննարկվել են նաև կոլեկտիվ պայմանագրերի խնդիրները, մեթոդների ու միջոցառումների մշակումը, որոնք կօգնեն արհմիությունում նոր անդամների ներգրավմանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Գործողության մեջ է դրվել «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որտեղ տեղ են գտել նաև արհմիությունների մի շարք առաջարկություններ: Օրենքով կիրառությունից հանվել է աշխատանքային գրքույկը, ինչը պայմանավորված է անձնավորված հաշվառման համակարգի ներդրմամբ, սահմանվել են աշխատանքային պայմանագրում փորձաշրջանի պայմանները, ամենամյա աձակուրդի տեսակները, տևողությունը, հստակեցվել են աշխատանքի էական պայմանները, արձակման նպաստի չափերը, 65 տարին լրացած անձի աշխատելու պայմանները, կանոնակարգվել են անչափահասների աշխատանքային հարաբերությունները, ամրագրվել են այն ոլորտները, որոնցում մինչև 14 տարեկան անչափահասը աշխատելու իրավունք ունի և այլն:

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌՕՐՅԱՅԻՑ

ՀՀ կառավարության աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի և «Լուսանշան» ՊՈԱԿ-ի աշխատողների արհեստակցական կազմակերպություններում ընտրվել են նոր նախագահներ, ովքեր կանոնադրությամբ սահմանված կարգով համարվում են ճյուղային հանրապետական միության խորհրդի անդամներ: Երիտասարդ նախագահներին՝ Գեորգի Հարությունյանին և Էդուարդ Մխիթարյանին, մաղթում ենք ակտիվ արհմիութենական աշխատանք: